

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 66/09

Քաղ. Երևան

29 հուլիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Բ.Շ.Վարդանյան, Ա.Վ.Բաբայան (քարտուղար), իր 2009թ. հուլիսի 29-ի նիստում (արձանագրություն № 72/04) քննարկեց «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ս.Խաչատրյանի 2009թ. հուլիսի 8-ի բողոքը՝ «POWER RANGERS» ապրանքաին նշանի գրանցումը (ՀՀ վկ. No.13984) անվավեր ճանաչելու և այն «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի անունով գրանցելու վերաբերյալ:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը բողոքում նշել է, որ «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ն (գրանցման համար 271.110.03591, գրանցման վկայական՝ 03 Ա 083490, ՀՎՀՀ՝ 01243669, տրված 09.01.2009թ.) իր գրանցումից անմիջապես հետո՝ 2009թ. հունվարի 9-ից, զբաղվել է «POWER RANGERS» քացր բամբակի արտադրությամբ: Ընդ որում, 20.02.2009թ. ընկերությունը արտադրել է մեծ քանակությամբ քաղցր բամբակ՝ «POWER RANGERS» անունով, իսկ առաջին մեծ վաճառքն իրականացրել է 11.03.2009թ.-ին և շատ կարճ ժամանակահատվածում արդեն ունեցել է սպառողների մեծ քանակ և պահանջարկ շուկայում, քանի որ «POWER RANGERS» քացր բամբակը մեծ ճանաչում է ձեռք բերել հանրապետության սպառողների շրջանակում և հաղիսանում է երեխաների սիրելի քաղցրավենիքը:

Բողոքարկողի կարծիքով, ընկերության կողմից արտադրված «POWER RANGERS» քացր բամբակի նման համբավի ձեռքբերմանը նպաստել են նաև ՀՀ հեռուստաընկերությունների կողմից մինչ օրս եթեր հեռարձակվող գովազդային հոլովակները, ինչպես նաև ցուցահանդեսներում այդ արտադրատեսակի ցուցադրումները, անցկացված բազմաթիվ խաղարկությունները և ակցիաները:

Բողոքարկողը նշել է, որ, ըստ էության, «POWER RANGERS» ապրանքային նշանը օգտագործվել է «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից ոչ միայն ապրանքի փաթեթավորման վրա այլ նաև կիրառվել է գովազդներում, Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող ցուցահանդեսներում ցուցանմուշները ցուցադրելիս, այսինքն, իր կարծիքով, այն ձևով, ինչպես որ դա

սահմանված է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև օրենք) 22-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով:

Բողոքարկողը բողոքում նշել է նաև, որ 2009թ. մարտի 20-ին «Արասո» ՍՊԸ-ն ապրանքային նշանի գրանցման հայտ է ներկայացրել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն (այսուհետ՝ նաև գործակալություն), որը 2009թ. ապրիլի 15-ին «POWER RANGERS» ապրանքային նշանի գրանցման մասին որոշում է կայացրել (ՀՀ վկ. No.13984), հաշվի չառնելով այն հանգամանքը, որ «POWER RANGERS» քաջր բամբակի անվանումը փաստացի օգտագործվում է «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի ընկերության կողմից որպես ապրանքային նշան և արդեն իսկ ճանաչում է ստացել ՀՀ ամբողջ տարածքով այդ ընկերության ծավալուն աշխատանքների շնորհիվ:

Ունենալով իր անունով գրանցված ապրանքային նշան, «Արասո» ՍՊԸ-ն 2009թ.մայիսի 1-ից սկսել է արտադրել «POWER RANGERS» քաղցր բամբակը, ընդ որում, առանց սննդամթերքի համար հաստատված ստանդարտի պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև մակնշման խախտումով, այն է՝ չնշելով արտադրության տարեթիվը, խախտելով առևտրային մրցակցության բոլոր կանոնները և բարոյական նորմերը, որի արդյունքում «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ին հասցվել է նյութական, գույքային և բարոյական վնաս: Այդ առումով բողոքարկողը անհրաժեշտ է համարում նշել, որ «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից արտադրված քաղցր բամբակ՝ «POWER RANGERS»-ի որակական և համային հատկանիշները գերազանցում են «Արասո» ՍՊԸ-ի կողմից արտադրված բամբակի որակին, ինչի ապացույցն է բողոքին կից ներկայացված՝ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կատարված լաբորատոր փորձարկման արձանագրությունը այն մասին, որ «Արասո» ՍՊԸ-ի կողմից արտադրված բամբակի որակը չի համապատասխանում ՍանՊին 2-III-4.9.-01.2003 (ՌԴ 2.3.2.1078--01) պահանջներին, ինչպես նաև նույն կազմակերպության կողմից կատարված լաբորատոր փորձարկման արձանագրությունը «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից արտադրված քաջր բամբակի բարձր որակական հատկանիշների մասին:

Ըստ բողոքարկողի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը քաղցր բամբակ՝ «POWER RANGERS» անունը «Արասո» ՍՊԸ-ի անունով գրանցելով խախտել է «Մտավոր սեփականության պահպանության մասին» Փարիզյան կոնվենցիան, Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագիրը, ՀՀ օրենքներ և օրենսդրական ակտեր: Իր պնդումը հիմնավորելու համար նա հղումներ է կատարել, մասնավորապես, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետի, 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի, 28-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի, ինչպես նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների, «Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին կարգի» 1.1 կետի «բ»

ենթակետի ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի վրա՝ իր տեսակետից տալով այդ խախտումների հիմնավորումները:

Ինչ վերաբերում է «POWER RANGERS» ապրանքային նշանը «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից ժամանակին չգրանցելուն, ապա բողոքարկողը պարզաբանել է, որ «POWER RANGERS» քաջոր բամբակը արտադրելուց հետո, մինչ իրացնելը, ընկերությունը դիմել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն և ստացել է բանավոր մերժում այն պատճառաբանությամբ, թե, իբր «POWER RANGERS» ապրանքային նշանը, համաձայն Մադրիդյան համաձայնագրի, արդեն իսկ 1993թ.-ին գրանցվել է «Սաբան Էնթրթեյնմենթ» (SABAN ENTERTAINMENT), իսկ ավելի ուշ՝ «Բի Վի Սի Էնթրթեյնմենթ անդեր Դիսնեյ» (BVS ENTERTAINMENT under DISNEY) ամերիկյան կազմակերպության անունով, այսինքն, «POWER RANGERS» ապրանքային նշանը Մադրիդյան համաձայնագրով միջազգային պաշտպանվածություն ունի: Սակայն, ինչպես այնուհետև նշել է բողոքարկողը, գործակալությունը՝ «POWER RANGERS» ապրանքային նշանը «Արասո» ՍՊԸ-ի անունով արտոնագրելուց, ամենևին հաշվի չի առել վերը նշված հանգամանքը, դրանով իսկ խախտելով նույն Մադրիդյան համաձայնագիրը:

Այսպիսով բողոքարկողը, ելնելով վերը շարադրվածից, ինդրել է «POWER RANGERS» ապրանքային նշանի գրանցումը (ՀՀ վկ. No.13984) անվավեր ճանաչել և նշանը գրանցել «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի անունով:

Բողոքին կից ներկայացվել են.

1. Պետական տուրքի անդորրագիր
2. Կանոնադրության և ՀՎՀՀ-ի պատճենները
3. Պետոռեգիստրի վկայականի պատճենը
4. Տեղեկանք աշխատողների քանակի վերաբերյալ
5. Տեղեկանք ֆինանսական շարժի վերաբերյալ
6. Արտադրանքի մատակարարման պայմանագրի պատճենը
7. Սետիֆիկատի պատճենը
8. ՀՀ ՏՊ 52154643. 5752-2009
9. Տեխնոլոգիական հրահանգ- բնութագրի պատճենը
10. «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կատարված լաբորատոր ստուգումների արդյունքները՝ 3 օրինակ
11. Գովազդային պայմանագրեր
12. Գովազդային տեսահոլովակների սկավառակը
13. Հաշիվ-ապրանքագրեր՝ թվով 115 հատ
14. «Էքսպո 2009» ցուցահանդեսի հրավերի և շնորհակալագրի պատճենները
15. «Էքսպո 2009» ցուցահանդեսին ծառայությունների մատուցման պայմանագրի և հաշիվ-ապրանքագրի պատճենները

16. Խաղարկությունում շահած երեխաների ցուցակի պատճենը
17. Քաղվածքներ ինտերնետային կայքից
18. Դիզայներական, արտադրական և տպագրական աշխատանքների կատարման մասին պայմանագրերի պատճենները
19. Լիազորագիր տրված Սարգիս Խաչատրյանին
20. Սարգիս Խաչատրյանի անձնագրի պատճենը
21. «Արաստ» ՍՊԸ-ի կողմից արտադրված «POWER RANGERS» քացր բամբակի նմուշներ՝ 5 օրինակ
22. «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից արտադրված «POWER RANGERS» քացր բամբակի նմուշներ՝ 5 օրինակ:

2009թ. հուլիսի 27-ին «Արաստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ 2.Դանիելյանը և Դ.Վարդիկյանը՝ «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ և 36-րդ կետերի համաձայն պատշաճ ծանուցված լինելով բողոքարկման խորհրդի նիստի անցկացման թվականի և վայրի մասին (ծանուցումը ստացել են 16.07.2009թ.) «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ իրենց առարկություններն են ներկայացրել բողոքարկման խորհուրդ, որոնք ուսումնասիրվել և հաշվի են առնվել կոլեգիայի կողմից բողոքի քննարկման ընթացքում:

Ներկայացված բողոքի քննարկման արդյունքում կոլեգիան պարզել է հետևյալը:

1. Բողոքի 2-րդ էջում բողոքարկողը նշել է, որ «ըստ էության, «POWER RANGERS» ապրանքային նշանը օգտագործվել է «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից» և հղում է կատարել օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի վրա, առանց ուշադրություն դարձնելու եղած վերապահումներին:

Տվյալ դեպքում բողոքարկողի կողմից 22-րդ հոդվածի մեջբերումը կապ չունի քննարկվող հարցի հետ, քանի որ այդ հոդվածում խոսքը գնում է **գրանցված** ապրանքային նշանների օգտագործման հասկացության և դրանց չօգտագործման հնարավոր հետևանքների մասին, իսկ «POWER RANGERS» ապրանքային նշանը «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի անունով գրանցված չէ:

Ինչ վերաբերում է որպես «POWER RANGERS» նշանի օգտագործման ապացույց բողոքին կից ներկայացրած հաշիվ-ապրանքագրերին, ապա կոլեգիան՝ ելնելով բողոքի հիմնական պահանջի ձևակերպումից, համարել է, որ դրանք բողոքարկման խորհրդի քննարկման առարկային չեն վերաբերում և տվյալ դեպքում որևէ նշանակություն ունենալ չեն կարող:

2. Բողոքարկողի կողմից բողոքի 2-րդ և 7-րդ էջերում բերված փաստարկները «Արաստ» ՍՊԸ-ի կողմից արտադրված բամբակի որակի ստանդարտներին չհամապատասխանելու մասին, ինչպես նաև «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի փորձարկման լաբորատորիաների կողմից կազմված փորձարկման արձանագրությունների

վրա հղումները՝ նախորդ կետում նշված հիմնավորմամբ, նույնպես հաշվի չեն առնվել կոլեգիայի կողմից:

3. Բողոքարկողի պնդումն այն մասին, որ «Արասո» ՍՊԸ-ի անունով «POWER RANGERS» ապրանքային նշանի գրանցման արդյունքում «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ին հասցվել է նյութական, գույքային և բարոյական վնաս, ինչպես նաև նրա կատարած մեջբերումները «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներից, բողոքարկման խորհրդի քննարկման առարկա լինել չեն կարող, դրանք վերաբերում են Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավասությանը:

4. Բողոքի 5-րդ էջում բողոքարկողի հայտարարությունը այն մասին, որ «ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը քաղցր բամբակ՝ «POWER RANGERS» անունը «Արասո» ՍՊԸ-ի անունով արտոնագրելուց հաշվի չի առել և խախտել է վերը նշված օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը, քանի որ Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետությունում տվյալ նշանի սեփականատեր հանդիսացող անձի գործակալի կամ ներկայացուցչի թույլտվությունը բացակայում է:» իմաստագուրկ է, հաշվի առնելով, որ տվյալ պարագայում կողմերի միջև բացակայում են «նշանի սեփականատեր» և նրա «գործակալի կամ ներկայացուցչի» իրավահարաբերությունները:

5. Անհիմն են հնչում «POWER RANGERS» ապրանքային նշանը «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից ժամանակին չգրանցելու վերաբերյալ բողոքարկողի բերված փաստարկները, քանի որ ապրանքային նշանի գրանցման հնարավորությունները գնահատելիս գործակալության «բանավոր մերժումը» լուրջ հիմք չէր կարող հանդիսանալ: Ինչ վերաբերում է «POWER RANGERS» ապրանքային նշանի Մադրիդյան համաձայնագրի ընթացակարգով գրանցված լինելու փաստին, ապա առկա միջազգային գրանցումները չէին տարածվել Հայաստանի հանրապետության վրա և, հետևապես, չունեն իրավական ուժ նրա տարածքում, հետեաբար բողոքարկողի հայտարարությունն այն մասին, որ «գործակալությունը՝ «POWER RANGERS» ապրանքային նշանը «Արասո» ՍՊԸ-ի անունով գրանցելուց ամենևին հաշվի չի առել վերը նշված հանգամանքը» այսինքն, միջազգային գրանցումների արկայությունը, «դրանով իսկ խախտելով նույն Մադրիդյան համաձայնագիրը:»

6. Որևէ հիմք չունեն նաև «POWER RANGERS» ապրանքային նշանը հանրահայտ ճանաչելու վերաբերյալ բողոքարկողի հավակնությունները և այդ առումով «Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին կարգի» 1.1 կետի «բ» ենթակետի վրա կատարած հղումը տեղին չէ և հաշվի չի առնվել կոլեգիայի կողմից, քանի որ ապրանքային նշանի հանրահայտությունը օրենքով սահմանված կարգով ճանաչվող փաստ է, որի հիման վրա տվյալ նշանին տրվում է իրավական պահպանություն, ինչպես որ դա սահմանված է օրենքում (Գլուխ III.1 «Հանրահայտ ապրանքային նշանների իրավական պահպանությունը») և նշված կարգում, այլ ոչ թե անհիմն հայտարարություն:

Այսպիսով, մանրամասնորեն ուսումնասիրելով «POWER RANGERS» ապրանքային նշանի գրանցման դեմ բողոքում բերված բոլոր հիմնավորված և ուշադրության արժանի փաստարկները, կոլեգիան եկել է այն եզրակացության, որ, բողոքարկման խորհրդի կողմից տվյալ գրանցման անվավեր ճանաչելու նպատակով քննարկման արժանի է միայն բողոքարկողի կողմից նշված այն փաստարկը, որ «POWER RANGERS» ապրանքային նշանի գրանցմամբ խախտվել են «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետի պահանջները, այն է.

«2. Որպես ապրանքային նշան չեն գրանցվում նաև այն նշանները, որոնք վերարտադրում են՝
գ) հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գիտության, գրականության, արվեստի հայտնի ստեղծագործությունները, դրանց անվանումները կամ դրանցից մեջբերումներն ու հատվածները (ֆրագմենտները), դրանց հերոսներին՝ եթե այդ իրավունքները ձեռք են բերվել մինչև տվյալ ապրանքային նշանի առաջնության թվականը:»

Կոլեգիան պարզեց , որ «POWER RANGERS» անվանման նկատմամբ հեղինակային իրավունքները պատկանում են Սաբան Էնթերթեյնմընթ Ինք., Սաբան Ինթերնեշնլ Էն.Վի.(Saban Entertainment, Inc., Saban International N.V.) ընկերությանը, հետևաբար այն որպես ապրանքային նշան չէր կարող գրանցվել այլ անձի անունով՝ առանց հեղինակային իրավունքի իրավատիրոջ համաձայնության:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

1. «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված է՝

«1.Ապրանքային նշանի գրանցումը կամ նշանի միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության տրամադրումը կարող է վիճարկվել և ճանաչվել անվավեր՝

ա) ամբողջովին կամ մասնակիորեն՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է սույն օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ կամ ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրման մասին

ստեղծությունների պաշտոնական հրապարակման օրվանից 5 տարվա ընթացքում, եթե իրավական պահպանությունը տրամադրվել է սույն օրենքի 12 հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ»:

«3. Սույն հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված ժամկետներում և հիմքերով բողոքը բողոքարկման խորհուրդ կարող է ներկայացնել **ցանկացած անձ**:»

Ուստի «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ն, օգտվելով օրենքով իրեն ընձեռված հնարավորությունից, հիմնավոր բողոք է ներկայացրել բողոքարկման խորհուրդ:

2. «POWER RANGERS» ապրանքային նշանի h.20090314 հայտով փորձաքննությունը անցկացնելիս փորձագետը առաջնորդվել է «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգի (այսուհետ՝ նաև կարգ) 95-րդ կետով սահմանված պահանջով, համաձայն որի «Օրենքի 12-հոդվածի երկրորդ մասկետին համապատասխան նույնական կամ շփոթելու աստիճան նման նշանների որոնումը **կարող է** կատարվել նաև «2) հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գիտության, գրականության, արվեստի հայտնի ստեղծագործությունների անվանումների կամ դրանց մեջբերումների ու հատվածների (ֆրագմենտների) և գործող անձանց անունների, արվեստի և մշակույթի ստեղծագործությունների կամ դրանց հատվածների մեջ, եթե դրանք չեն համընկնում հայտնի պատմական դեպքերի, ժողովրդական ստեղծագործության երկերի (Էպոսների, հեքիաթների, առասպելների) աշխարհագրական անվանումների հետ, և այդ ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքների գործողության ժամկետը չի ավարտվել»:

Սակայն այդ նորմը իմպերատիվ բնույթ չի կրում, քանի որ կարգի նույն կետի վերջին պարբերությունը սահմանում է, որ «Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն 95-րդ կետում նշված տվյալների նկատմամբ **որոնման աշխատանքների անցկացումը փորձագետի համար պարտադիր չէ**, սակայն նրա կողմից կարող են օգտագործվել նշանի գրանցման վերաբերյալ որոշում կայացնելիս, անկախ այն հանգամանքից, թե ինչ ճանապարհով են դրանք հայտնի դարձել փորձագետին:»

Ելնելով դրանից, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «POWER RANGERS» ապրանքային նշանը գրանցելու մասին փորձաքննության որոշումը կատարվել է օրենքի պահանջների սահմաններում:

Սակայն, միաժամանակ բողոքարկման խորհուրդը համարում է, որ «Արաստ» ՍՊԸ-ի անունով «POWER RANGERS» ապրանքային նշանի No.13984 գրանցման առկայությունը խախտում է այդ անվան նկատմամբ նրա հեղինակի բացառիկ իրավունքը, հետևապես, բողոքարկողի խնդրանքը՝ «POWER RANGERS» ապրանքային նշանի No.13984 գրանցումն անվավեր ճանաչելու մասով, օրինաչափ է:

3. Ինչ վերաբերում է «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի անունով «POWER RANGERS» ապրանքային նշանը գրանցելու մասին բողոքարկողի խնդրանքին, ապա բողոքարկման խորհուրդը

համարում, որ այն չի կարող բավարարվել, քանի որ «POWER RANGERS» ապրանքային նշանի No.13984 գրանցումն անվավեր ճանաչելը ամենևին չի նշանակում, որ այդ ապրանքային նշանը կարող է գրանցվել «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի կամ որևէ այլ անձի անունով, նկատի ունենալով, որ նման գրանցման պարտադիր պայմանն է հանդիսանում «POWER RANGERS»-ի նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատիրոջ համաձայնության առկայությունը, ինչպես դա սահմանված է կարգի 16-րդ կետում:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով, 12-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 74-րդ կետի «բ» ենթակետով Բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «ԷՄ ԷՍ Գրուպ Սիստեմս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ս.Խաչատրյանի 2009թ. հուլիսի 8-ի բողոքը մասնակիորեն և «POWER RANGERS» ապրանքային նշանի գրանցումը (No.13984) անվավեր ճանաչել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան